

## ՀԱՅԿԱՆՈՒԸ ՄԵՍՐՈՊՅԱՆ

քանասիրական գիրք. դոկտոր, ԼԻ

ՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՈԱՇԵՐՏԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տոնակատարությունները եւ տոնական հանդիսությունները, ընծայաբերության ծիսական կարգը հայ ժողովրդի կենցաղի անբաժան մասն են: ԺԸ. դարում Միմեոն Ա. Երեւանցի Կաթողիկոսի կողմից հաստատված եւ Քրիստոսի ծնունդով պայմանավորված տոմարի համաձայն՝ շաբաթվա օրերից առաջինը՝ միաշաբ(ա)թին կամ կիրակին, նվիրվում է Բարձրյալի հիշատակությանն ու երկրպագությանը<sup>1</sup>: Միաշաբաթի կամ կիրակի օրվա մասին վկայված է. «Միով աւուրբ զկնի շաբաթ աւուր, որ եւ առաջին օր շաբաթուն՝ այսինքն եօթնեկի. կիրակէ, այսինքն տէրունական՝ օր յարութեան Քրիստոսի»<sup>2</sup>: Ըստ Հ. Աճառյանի՝ կիրակէ բառը փոխառություն է հունարենից, քրիստոնեության միջոցով տարածվել է մի շարք լեզուներում եւ նշանակում է «տէրունական»<sup>3</sup>: «Կիրակէ անուանեցին հարքն սուրբ, որ լսի օր տէրունի»<sup>4</sup>:

Հայերենի տարածքային տարբերակներում միաշաբաթ(ի) բառին չենք հանդիպում: Բարբառների մեծ մասում վկայված է կիրակի բառը՝ հետեւյալ հնչատարբերակներով. կիրէկի<sup>5</sup> (Բուրդուր), կրրա՛կի (Ագուլիս), կիրակի (Ուրմիա), կրրակէ (Ոգմ), կրրակէ (Մուժումբար), կրրէ՛կի/զրրէ՛գի (Ղարաբաղ), զրրակէ (Մեղրի), գիրագի (Շամախի), զրրագի (Բերդ), զիրագի (Լոռի), գիրագէ (Տիգրանակերտ), գիագի (Համշենի

<sup>1</sup> Տե՛ս «Տօնացոյց», հ. Բ., Ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1887-ՌՅԼԶ:

<sup>2</sup> ՆՀԲ, հ. Բ., Վենետիկ, 1837, էջ 271:

<sup>3</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երեւան, 1973, էջ 598:

<sup>4</sup> Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1100:

<sup>5</sup> Բարբառային օրինակներն ըստ բարբառային բառարանների, բարբառագիտական մեծագրությունների, բարբառային բանահյուսական գրականության, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի՝ բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրին համապատասխան բարբառային ձեռագիր նյութերի (500 բնակավայր), գիտարշավների ընթացքում մեր կատարած գրառումների:

Խոփա եւ Բորչկա), գիյագի (Զեյթուն, Համշենի Առդլու), գիրայի (Կեսարիա), գիրեյի (Անկարայի թրքախոս հայերի բարբառ) եւ այլն:

Արարատյան բարբառում կիրակի կամ ջան-ջան կիրակի է կոչվում Քրիստոսի հարության օրը, որը հաջորդում է դժոխքի ավերումը եւ Հիսուսի թաղումը խորհրդանշող կիսամետ շաբաթին. համտ. «Լընգլընգան ուրբաթ, կիսամետ շաբաթ, ջան-ջան կիրակի»:

Պոլսի բարբառում կիրակի բառը հանդես է գալիս իմաստի ընդլայնումով եւ նշանակում է նաեւ «համընդհանուր, համաժողովրդական բնույթ ունեցող օր». համեմատել՝ «Օր կիրակիին խախկ ըլլա»<sup>6</sup> հանդիմանական արտահայտություններ:

Արցախի բարբառում գրանցված է գիրգիրակուն բաղադրությունը, որը, կարծում ենք, կիրակի եւ իրիկուն բառերի ձեւաիմաստային ձուլման՝ բաղադրվածքային արդյունք է<sup>7</sup>: Կարելի է ենթադրել, որ այս բաղադրվածքը հատկանշվում է սուրբ համարվող կիրակնամուտը եւ կիրակնամուտի երեկոյան ժամերգությունը: Արարատյան բարբառում կիրազմուր նշանակում է «շաբաթ երեկոն, որ սուրբ է համարվում»: Ըստ ՆՀԲ-ի՝ «կիրակմուտ. մուտք կիրակէի. երեկոյն եւ գիշերն շաբաթու, որում լուսանայ միաշաբթին»<sup>8</sup>:

Կեսարացիների կրոնական տոնակարգում կա «գառնէրը զէնոք գիրագի» արտահայտությունը՝ «զոհաբերության եւ ագապի ծխակարգերով նշվող տոն» իմաստով:

Տարվա մեջ առանձնանում են նաեւ քրիստոնեական բովանդակություն ունեցող այլ տոնական օրեր եւս, որոնք բարբառային բառապաշարում արտահայտվում են տարբեր բառերով եւ արտահայտություններով: Օրինակ՝ նըշով օր՝ Մուշի բարբառի խիանի խոսվածք («նշանակալի, առանձնակի օր»), հըրաշալի օր՝ Ադանայի բարբառ («զատիկ, նաեւ եկեղեցական այլ տոն»), միսիս օիսրը՝ Երզնկա, կընար օր՝ Սվեդիա, դէրի<sup>9</sup>, Կարին, Ախալցխա (կարծում ենք՝ տէր>դէր բառի տիրոջ դէրի թեք հոլովածէն է, այսինքն՝ «տիրոջ համար կատարվող, տիրոջը նվիրված»), ագոս<sup>10</sup> օր՝ Մանիսա, Նոր Նախիջևան, Պոլիս, Սեբաստիա, ագամ օր՝

<sup>6</sup> Հ. Աճառյան, Պոլսահայ անգիր բանասիրություն, Երեւան, 2009, էջ 158:

<sup>7</sup> Բաղարկության մասին տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարաբյուրյան, Լեզվաբանական բառարան, Երեւան, 1975, էջ 47:

<sup>8</sup> ՆՀԲ, հ. Ա., Վենետիկ, 1836, էջ 1100:

<sup>9</sup> Տե՛ս Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Երեւան, 1952, էջ 134:

<sup>10</sup> Ըստ Հ. Աճառյանի՝ *ակումբ* բառից (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառա-

Աղանա, Բեյլան, ազան օր՝ Զեյթուն, ազում կամ ազումօր՝ Կեսարիա եւ այլն: Նշված բարբառաբանությունները հոմանիշ են կիրակի («տերունական») բառին: Հմմտ. «Այսօր ազումօր է, ժամը շատ մարդ կ'ըլլա» (Կեսարիա):

Արարատյան բարբառում, ինչպես նաեւ խոսակցական տարբեր ոճերում գործածվում են ազատ օր, հանգստի օր եւ կարմիր օր հոմանիշները, որոնք նորաբանություններ են՝ պատճառաբանված ժամանակակից տոնացույցներով, եւ միշտ չէ, որ ունեն կրոնակեղեցական բովանդակություն:

Նըշով կամ հըրաշալի օրերի առթիվ կազմակերպվող հանդիսությունները կոչվում են կրթություն =կույթ //կիրթ+ութ (Արաբկիր, Ակն, «բերքից, այգեկուծից հյուրասիրելը, տասանորդ տալը»):

Քրիստոսի հարությունը<sup>11</sup> նվիրված տաղավար տոնը ժողովրդախոսակցական լեզվում կոչվում է Մեծ զարիկ կամ Զարիկ: Այս տոնի նախապատրաստական շրջանը բաղկացած է 40 պահոց օրերից եւ կոչվում է Մեծ պահք, որը հայերենի տարածքային տարբերակներում արտահայտվում է մի շարք հնչյունական եւ բառային զուգաբանություններով, պահքի թեմային հարակից դարձվածային միավորներով, առաձներով ու ասացվածքներով: Հմմտ. «Մէնձ բախքը էգալ, մի ձօթը գ'արուն էր, մի ձօթը ասուն էր» (Դերսիմ, Միրաք)<sup>12</sup>:

Զարիկ տոնանունը կերտված է հրեական պատկեր անվանման համաբանությամբ: Զատիկ է կոչվում նաեւ Ծննդյան տոնը, որը հայերենի բարբառներում ունի պըզպիկ // փոքր զարիկ («Ծննդյան տոն») անվանումը: Մինչ «զատիկ» հասկացության քննությանն անցնելը՝ նշենք, որ այս տոնին սերտորեն առնչվում է ծիսական արարողության նախընթաց երեկոն՝ նախատոնակը կամ նավակատիկը: Վերջինս կարեւոր ծիսական բաղադրիչ է եկեղեցական նշանավոր այլ տոների համար եւս:

Տերունական տոների նախատոնակ երեկոն Կարնո բարբառի Բաբերդի խոսվածքում կոչվում է հավկուր: Տվյալ բարդություն հիմքում ընկած է այն սնահավատությունը, ըստ որի՝ նախատոնակի երեկոներն աշխատողներն իրենց ենթարկում են հավկույր դառնալու վտանգի<sup>13</sup>: Կարծում

րան, հ. Ա., Երեւան, 1971, էջ 110):

<sup>11</sup> Տե՛ս Յ. Աղաբաբեան, Ս. Յարութին, «Հովի», Թիֆլիս, 1906, թ. 11, էջ 163-165. Վ. Յակովբեան, Խորհրդածութիւն Զատիկի յարութեան, «Եկեղեցի Հայաստանեայց», Կ. Պոլիս, 1888, թ. 8, էջ 114-121. Նույն հեղինակի՝ «Տօն Զատիկի», էջ 121-124:

<sup>12</sup> Ռ. Բաղդամյան, Դերսիմի բարբառային քարտեզը, Երեւան, 1960, էջ 65:

<sup>13</sup> Նախապաշարումների եւ համապատասխան բառաշերտի մասին տե՛ս «Բանասէր»,

ենք՝ հապկուր հասկացութեան բովանդակութիւնն առնչվում է հրեաների շաբաթապահութեան ավանդույթին, որի մասին վկայված է Հին կտակարանի «Ծննդոց» գրքում. «Եւ հանգեալ յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց՝ զոր արար» (Ծննդոց, Բ. 2) եւ «Ելից» գրքի տասնաբանյայի չորրորդ պատվիրանում (Ելից Ի. 8):

Ազանայի եւ Պոլսի բարբառներում հապկուր կցական բարդութիւնը ժամանականիշ բառը է եւ իմաստի կոնկրետացումով նշանակում է միայն Քրիստոսի Հարութեան տոնից մինչեւ Համբարձում ընկած ժամանակահատվածը:

Նախակարիկ գրական փոխառութիւնը բնորոշ է գրեթե բոլոր բարբառներին եւ գրաբարից ավանդված հնչյունակազմով պահպանված է Արարատյան, Կարնո, Նոր Զուղայի, Թիֆլիսի եւ այլ բարբառներում: Բազմաթիվ վայրերում նախակարիկ-ը հանդես է գալիս հնչափոփոխակներով՝ երբեմն ի հայտ բերելով իմաստային ինչ-ինչ տարբերութիւններ: Այսպես՝ ա) արեւելյան բարբառատարածք. նովակարիկ (Երեւան), նրվրկա՛րիկ/նրվրկա՛րիկ (Ագուլիս), նրվրկարիք (Բուրդուր, Կարճեւան), նրվրկա՛րէկ (Մեղրի), նրվրկա՛րիկ (Գորիս), բ) արեւմտյան բարբառատարածք. նավագաղիք (Երզնկա, Զեյթուն, Կեսարիա, Մալաթիա), նավագաղի (Ասլանբեկ), նավագաղիք (Խարբերդ), նավագաղիգ (Հաջըն, Նոր Նախիջեւան, Ռոդոսթո, Սեբաստիա, Առտիալ, Սուչավա), գ) Պարսկահայք. նավակարիկ (Մարաղա, Ուրմիա), նավկարիկ (Սալմաստ) եւ այլն: Ինչպես նկատում ենք, հիմնականում գործում են տվյալ բարբառատարածքին բնորոշ ձայնավորական եւ բաղաձայնական համակարգային հնչյունափոխութեան ձեւեր՝ ա-ի վերածում օ-ի, ը-ի, զրոյի, քմայնացում, ի > է հնչյունափոխութիւն, կ եւ տ պայթական խուլերի ձայնեղացում, շնչեղ խլացում, քմայնացում, անկում եւ այլն: Օրինակները ցույց են տալիս, որ արեւելյան (նաեւ Պարսկահայքի) բարբառային տարածքներում գրական հայերենին բնորոշ կ, տ պայթական խուլերը հիմնականում պահպանված են, իսկ արեւմտյան բարբառային գոտիներում դրանք վերածվել են ձայնեղ պայթականների:

Միայն կը ճյուղի բարբառներով հաղորդակցվող Սասուն-Վան-Ողջ բարբառային կղզյակում հանդիպում են ն ձայնորդի անկումով նավագաղիգ (Սասուն) եւ ամփոփման ենթարկված կարիկ (Վան), կարէկ (Ողջ) ձեւերը:

Վեցիազարեակ յայտնեալ կամ տեսութիւն ոամկական սնապաշտութեան վրայ, Կ. Պոլիս, 1851:

Նավակարիկ բառը երբեմն այս կամ այն բարբառում հանդես է գալիս բազմիմաստություն բերելով իմաստային անցումով: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառի Բերդի ենթախոսվածքում նրվրկարիկ նշանակում է ընդհանրապես ցանկացած «քրիստոնեական տոն»: Կարծում ենք՝ տվյալ դեպքում իմաստավորություն համար հիմք է հանդիսացել թյուրմբռնումը եւ բուն տոնը տոնի նախապատրաստական շրջանի հետ շփոթելը: Մուշի բարբառի Ալաշկերտի խոսվածքի ավակարիկ (բառասկզբի ն ձայնորդի կորուստ եւ վերջին վանկի տեղի վրա կ խոլ պայթականների ձայնեղացում) բառն ունի «տոնական արարողության բացման հանդիսություն» իմաստը: Թիֆլիսի, Ղարաբաղի, Արեւի բարբառների, Արարատյան բարբառի Վաղարշապատի, Աշտարակի, Մուշի բարբառի Բուլանոլիսի խոսվածքների կրոնական բառապաշարում նավակարիկ բառը հանդես է գալիս իմաստի կոնկրետացումով եւ հատկանշում է եկեղեցական այնպիսի տոն, որի ժամանակ մսեղեն ուտելն արգելվում է: Այսինքն՝ կարող ենք ենթադրել, որ տարածքային տվյալ տարբերակներում նավակարիկ-ը հոմանիշ է պահք բառին («Հագարից մի օր Զարիկ, Էն էլ նավակարիկ»<sup>14</sup>, «Ախկադրին հագարան միսօրին իլալ զարիկ, Էն էլ՝ նավակարիկ», Արեւ)<sup>15</sup>: Վանի բարբառում «Հարություն տոնի նախատոնակ» հասկացությունն առանձնանում է զարիկի նավակարիկ, մեծ նավակարիք կամ ավագ կարիկ բառակապակցություններով: Վասպուրականի տարածքի բարբառներում, ըստ ընդունված տոնակարգի, այդ բառանուններով նշվում է նաեւ պահքի վերջին օրը:

Բարբառային լայն տարածք է ընդգրկում իւրթումի նավակարիք // իւրթման նավակարիք (Երեւան, Ախալցխա, Այնթապ, Արաբկիր, Երզնկա, Խարբերդ, Մարաշ, Պոլիս, Վան եւ այլն) բարբառաբանությունը՝ «ճրագալույց, Զատիկի կամ Ծննդյան նավակատիք» իմաստով: Ծննդյան կամ Զատիկի նավակատիքը Ագուլիսի բարբառում նշվում է թաթաղում<sup>16</sup>, Սվեդիայի բարբառատարածքում՝ իւրթում բառերով:

Զարիկ բառին համարժեք հարություն գրական ձեւն ունեն շատ քիչ թվով տարածքային տարբերակներ. հարություն (Մուշ), արութին (Տիգրանակերտ), հարություն (Մալաթիա) եւ այլն, թեեւ Հարություն (Պոլիս, Երեւան), նաեւ Հարութ (Արարատյան), Արութին (Թիֆլիս), Արթին (Գորիս), Արթեն (Մուշ), Յարութեն (Բուլանոլիս), Յարութն (Ալաշկերտ) անձնանուն-

<sup>14</sup> Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Երեւան, 1951, էջ 181:

<sup>15</sup> Ա. Լուսինյան, Արեւի բարբառը, Երեւան, 1982, էջ 245:

<sup>16</sup> Հմմտ. վրացերեն՝ թաթխվა, ուսիերեն՝ թաթախում:

ները՝ համապատասխան հնչյունակազմով, գործածվում են գրեթե բոլոր բարբառային տարածքներում:

Զարիկ անհնչյունափոխ ձևն է գրանցված Մոկսի, Կարնո, Նոր Զուղայի եւ այլ բարբառներում:

Հնչյունափոխական տարբերակներն ունեն հետեւյալ կարգի տարածքային բաշխվածություն. զարիկ (Ագուլիս, Շամախի, Ուրմիա, Մանազկերտի Բաղնոս), զադիգ՝ (Սուչավա), զարիգ՝ (Խարբերդ), զադագ (Սվեդլայի Քաբուսի, Յոդունօլուկ), զադիյ (Ասլանբեկ), զեդեգ՝ (Ղարաբաղ, Կապան, Մոսթումբար), զեդիկ (Բուրդուր, Կաքավաբերդ), զաթեկ // զաթիկ (Արեշ), զադեկ (Մեղրի (Կարճեւան, Վահրավար, Գուդեմիս, Կուրիս, Ագարակ), զադը՝գ (Զեյթուն) եւ այլն: Օրինակ՝ «Էր խել-քօվիթ դարին էրգու ժու՛մ զադիգ գ՛էնիս» (Տիգրանակերտ)<sup>17</sup>: «Բիկիէդ շինին ի Զեդիկէն, Չըմ լէդինու եւրմինիէն» - «Բուկեդ են պատրաստում Զատիկին, չեմ ձանձրանում դրանից» (Քեսաբ): «Իկուօժ է Բէ՛սպու Զէ՛րեդ, կէնսէքը կը շէ՛րին ըզքիշկիրը» - «Եկել է Քեսաբի զատիկը, կանայք քեշիկ («զատկական ճաշ») են պատրաստում» (Քեսաբ)<sup>18</sup>:

Ինչպես վերը նշեցինք, բարբառների գերակշիռ մասում Ծննդյան եւ Հարության տոները միմյանցից զանազանվում են մեծ (ճոշ զարիկ, Վան, վրէնձ զարիկ, Նոյեմբերյան) եւ փոքր (պըսարիկ զարիկ, Դիադին, պուճուր զարիկ, Լոռի) որոշիչներով: Անտիոքի կամ ծայր հարավարեւմտյան խմբակցության Զեյթուն-Մարաշի բարբառներում զարիկ բառով հատկանշվում են բոլոր տաղավար տոները՝ Ծննդյան, Հարության, Պայծառակերպության, Աստվածածնի եւ Խաչվերացի:

Զարիկ բառը որոշ բարբառներում բազմիմաստ է. Բուլանուխի խոսվածքում, օրինակ, նշանակում է՝ 1) զենումն, զոհ, 2) ոչ պահք, ուտիս օր, 3) տոնական օր, երբ պահքը լուծվում է մսեղեն եւ յուղալի կերակուրներով:

Զարիկ բառի իմաստով է պայմանավորված զարիկ («կարմիր միջատ») նույնանունությամբ վերագրվող կրոնական բովանդակությունը եւ ըստ այդմ՝ հաջողության նշան լինելու նախապաշարմունքը: Նույն անունով բարբառախոսներն անվանում են տոնի մոտակա օրերին երեւացող կարմրավուն միջատը. Աղաբազարի, Նիկոմեդիայի, Խանդակի, Արծափի բարբառներում այն կոչվում է նաեւ զարկի պըլոճ, սապուժո կով, յեզնակ, Բուլանուխի Յոնջալու գյուղի ենթախոսվածքում՝ զադգի քօլօջ, Մոկսի

<sup>17</sup> Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Երեւան, 1978, էջ 174:

<sup>18</sup> Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Հալէպ, 1986, էջ 345 եւ 353:

Մամուտանցում՝ ճօշ գարկը բոլօճ, նաեւ պասը գարեկ, Սուրմալուի Դաշբուռունում՝ գարկի բ'ըլօճ («Զարկի բ'ըլօճը էկավ, գարիկն էլ բ'երեց»):

Զատկի տոնին են առնչվում մի շարք բարբառային կազմություններ. գարկասիայ (Արարատյան բարբառ), գարիկասիայ (Ագուլիս, «զատկի տոնին Հարազատներին իբրեւ բաժին ուղարկվող ուտեստ»): Զատկին մատաղ բաժանելու արարողությունն անվանում են ախար (Գորիս), զենլին («մատաղացում»)՝ ախարացու (Ղարաբաղ): Հիմնական գործողության անվանմամբ է պայմանավորված իմաստային այն փոփոխությունը, որը նկատվում է ախար-կիրակի արտահայտության մեջ՝ «զատկի կիրակի» (Երեւան):

Զարկի բառով են կազմված նաեւ՝ գարկություն – 1. զատիկ օր, 2. զատկի առիթով կամ զատկի համար (Արարատյան, Մուշ, Երեւան, Առտիալ, Թիֆլիս), զրկըշարաթ – զատիկի շաբաթ, զրկըռեխ – զատիկի մոտերքը (Ագուլիս), զրուագարիկ (= «ծռագատիկ») (Սուշավա) եւ այլն:

Ծռագատիկը, որի պատճառով հաճախ միջեկեղեցական խռովություններ են տեղի ունենում, հայտնի է գրեթե բոլոր բարբառախոսներին: Ստ. Մալխասյանցը ծռագարիկ բառի մասին գրում է. «Ամեն եկեղեցի յուր զատիկն է համարում ուղիղ, իսկ մյուս եկեղեցուներ համարում է ծռագատիկ»<sup>19</sup>: Ինչպես նկատում ենք, ծռագարիկ բառի կերտումը պատճառաբանվում է սուբյեկտիվ հիմքով՝ սեփական համոզմունքը գերադասելով եւ այլոցը «ծռռ, սխալական» համարելով:

Զատկին հարակից հասկացություններից են կարմիր կիրակի (Արարատյան, Շիրակ, «զատկի երրորդ կիրակին»), Էրգան ուրիս (Ղարաբաղ, «զատիկից մինչեւ համբարձում ընկնող ուտյաց օրերը») եւ այլն:

Զատկին, Կաղանդին, Քրիստոսի ծնունդին, Տյառնընդառաջին երիտասարդները, նաեւ նորագասկները այցելում են ազգականներին եւ որպես հարգանքի նշան՝ համբուրում մեծահասակների ձեռքը: Այդ ծիսակարգը Ակնում եւ Պրուսայի Ենիճե գյուղում կոչվում է ձևոքպագ: Պոլսի բարբառում ձևոքպագ բառը իմաստի նեղացման է ենթարկվել եւ նշանակում է՝ «հարսանիքից ութ օր հետո, նաեւ տոնական օրերին հարսի ու փեսայի այցելությունը հարսի հայրական տուն՝ ծնողների աջը համբուրելու»:

Ինչպես յուրաքանչյուր տոնի, այնպես էլ Զատկի խոհանոցը առանձնակի է, որն էլ հիմք է հանդիսացել մի քանի բառաձևերի կերտման. չօրեք՝ (Բեյլան, «ծիսական շաքարահաց»), փրզընգընիս արուր (Սղերդ,

<sup>19</sup> ՀՔԲ, հ. Բ., Երևան, 1944, էջ 355:

«զանազան ուստեստներով պատրաստված կերակրատեսակ»), փրսադիր, այսինքն՝ «պսակադիր» (Նոր Նախիջևան, «Քրիստոսի փչե պսակի տեսքով խմորեղեն») եւ այլն:

Տոնի թեմատիկայով են պայմանավորված մի շարք նախապաշարումներ, որոնք հայերենի բարբառներում արտահայտվում են հարադրություններով ու դարձվածքներով. օրինակ՝ պատուաւորիք անել (Մուշ, Վան, Կարին)<sup>20</sup>, յեղիջել // յեղիճել (=եղինջ+ել) (Սուլալա), «ռումինական սովորույթով ձեռքերը եղինջով արյունոտել» : Տվյալ դեպքում սպասելի էր, որ այս սովորույթի հետ ռումինահայերի բարբառային բառապաշար պիտի անցած լինեին ռումիներեն համապատասխան բառը, սակայն, ինչպես տեսնում ենք, Սուլալայի բարբառում հաղթել է հայերեն տարբերակը:

Պոլսի բարբառն ունի «զարիկը վրան աղյուրէր է» արտահայտությունը, որի համար հիմք է հանդիսացել զատկի տոնին նոր հագուստ չկրելու նախապաշարմունքը<sup>21</sup>: Կարնո բարբառի Բասենի խոսվածքում «եղունգով հմայել» արտահայտությունն ունի կրոնական՝ մասնավորաբար զատկական տոնին առնչվող իմաստ: «Բասենում համոզուած են, որ եթէ մանուկը ծնուի Ծննդեան երեկոյին կամ Զատիկի խթման կամ թաթախման երեկոյին, կը դառնայ եղունկով հմայող»<sup>22</sup>:

Այսպիսով, ըստ այսմ՝ կարելի է եզրակացնել՝ ա) Հարության տոնը նշանակալից իրադարձություն է բարբառախոս հայության համար, եւ տոնի նախապատրաստության, ընթացքի եւ ավարտի թեմայով հայերենի բարբառներում ստեղծվել են որոշակի քանակով բառեր ու արտահայտություններ, բ) հայերենի տարածքային տարբերակներում մեծ թիվ չեն կազմում հարություն գրական ձեւի հնչյունական տարբերակները, գ) տարածքային տարբերակներում հիմնականում գործածվում են զարիկ բառի հնչյունական զուգաբանությունները, դ) տոնի բովանդակությամբ պատճառաբանված նախապաշարմունքների համապատասխան անվանումները համալրում են բարբառային կրոնակեղեցական իմաստային (թեմատիկ) խումբը:

<sup>20</sup> Տոնի նախօրյակին, քնակարանամուտին կամ գարնանամուտին տունը եւ առաստաղը մաքրել, պատերը ճերմակեցնել, գետինը նոր կավով ծեփել եւ այլն:

<sup>21</sup> Պոլսեցիները զատկի օրը նոր զգեստ չեն կրում, քանի որ, նախապաշարմունքի համաձայն, հնարավոր է անհաջողության հանդիպեն:

<sup>22</sup> Քաջբերունի, Տօներ, ԱՀ, Թիֆլիս, 1901, գիրք VII-VIII, էջ 118-119:

## РЕЗЮМЕ

Праздники Рождества и Воскресения Христова называются у армян “Затик”, но этим праздникам в армянских диалектах соответствуют названия “Большой Затик” (Воскресенье) и “Малый Затик” (Рождество). С понятием “Затик” тесно связаны так же диалектные изоморфизмы обозначающие предидущий вечер не только этих, но и вообще всех церковных праздников. Литературная форма слова рождество, которое эквивалентно слову затик, употребляется только в некоторых говорах армянского языка. Исследование показывает, что а) Воскресение Христова большой знаменительный праздник для диалектоговорящих христиан-армян, которые разными словами и выражениями описывают праздничные дни; б) в армянских диалектах очень редко встречаются фонетические варианты литературного слова воскресенье; в) в армянских диалектах доминируют фонетические изоморфизмы слова затик; г) в некоторых региональных вариантах армянского языка употребляются синонимы и разные фразеологические обороты, которые обогащают религиозно-церковную лексику (тематическую группу) армянских диалектов.

## SUMMARY

The celebration of Christ's resurrection is named in Armenian “*zatik*”. Easter is called the Christmas and Easter holidays, which have names *Great Zatik* (“Resurrection Day”) and *Minor Zatik* (“Birth Day”) in the Armenian dialects. The concept of “*Zatik*” is closely related to the celebration of eve, holiday or those marks of all important religious holidays. Easter resurrection gives adequate literary form of very limited number of options. The word *Zatik* is a non shifted linguistic form in Armenian dialects. The study shows that: a) the Resurrection is a milestone for Armenians speaking the dialect. The holiday preparations, progress and conclusion on Armenian dialects created a certain number of words and phrases, b) phonetic versions of literary form of resurrection do not constitute a large number of language versions, c) the synonyms of the concept is utilized only in a scarce number of places, d) the relevant content names commemorating the prejudice reasoned with holiday complement the religious-ecclesiastical idiomatic semantic (thematic) group.

